

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով «Արտակարգ իրավիճակների կանխման եւ վերացման բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2015 թվականի հոկտեմբերի 16-ի համաձայնագրի դրույթները,

գործելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ Միջազգային բժշկասանիտարական կանոնների (2005 թ.) ներդրման եւ հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի այն արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման ժամանակ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ռազմավարության իրագործման շրջանակներում, որոնք պայմանավորված են վտանգավոր վարակիչ հիվանդությունների կամ զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների (թունավորումների) դրսեւորումներով կամ կենսաահաբեկչական ակտերի կատարման սպառնալիքների, ինչպես նաեւ հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության այլ իրադարձությունների իրականացմամբ,

ղեկավարվելով հանրային առողջապահության ոլորտում համագործակցությունը շարունակելու եւ ընդլայնելու ցանկությամբ,

ընդունելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ոլորտում համագործակցության կարելությունը, որոնց համար պահանջվում է անցկացնել միջոցառումներ՝ ուղղված Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետության տարածքի սանիտարական պաշտպանությանը, այդ թվում՝ մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների օգնությամբ,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից

պետությունների տարածքները սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների առաջացումից եւ դրանց հնարավոր հետեւանքներից պաշտպանելու փոխադարձ շահերից, որոնք կապված են սահմանակից պետությունների տարածքներում արտակարգ իրավիճակի տարածման եւ Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում միջպետական փոխադրումների եւ առետրի համար սահմանափակումների ռիսկի հետ,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն համաձայնագրի նպատակներով գործածվում են հետեւյալ եզրույթները՝

Կողմերի պետություններ՝ սույն համաձայնագրի մասնակից պետություններ.

հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակ (այսուհետ՝ արտակարգ իրավիճակ)՝ արտասովոր իրադարձություն, որն առաջացել է վտանգավոր վարակիչ կամ զանգվածային ոչ վարակիչ հիվանդություններից (թունավորումներից), ինչի համար պահանջվում են ազգային եւ (կամ) միջազգային մակարդակով համակարգված պատասխան միջոցներ՝ ուղղված տարածքի սանիտարական պաշտպանությանը.

մասնագիտացված հակահամաճարակային բրիգադներ՝ Կողմերի պետությունների՝ մշտական պատրաստության եւ արտակարգ արձագանքման, ինքնավար գործարկման շարժական կազմավորումներ, որոնք օգտագործում են ժամանակակից ախտորոշիչ, տեղեկատվական տեխնոլոգիաներ եւ սարքավորումներ, ունեն որակավորված կադրային կազմ, ունակ են լուծելու արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ վերացման խնդիրներ.

հայցող Կողմ՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ (կամ) վերացման գործում իրեն օգնություն ցուցաբերելու վերաբերյալ հարցումով դիմող Կողմ.

տրամադրող Կողմ՝ հայցող Կողմի հարցման հիման վրա օգնություն ցուցաբերող Կողմ.

իրավասու մարմին՝ Կողմի պետության մարմին, որն ազգային օրենսդրությանը համապատասխան պատասխանատու է արտակարգ իրավիճակի գոտում հակահամաճարակային եւ կանխարգելիչ միջոցառումների անցկացման եւ սույն համաձայնագրի իրագործման համար.

հանդերձանք՝ մասնագիտացված հակահամաճարակային բրիգադի՝ արտակարգ իրավիճակի կանխարգելման եւ վերացման համար նախատեսված գույք, նյութեր, տեխնիկական եւ տրանսպորտային միջոցներ, լաբորատոր սարքավորումներ, բրիգադի անդամների անձնական գույք, կապի միջոցներ, դեղորայք եւ այլ անհրաժեշտ գույք.

ծախսանյութեր՝ արտակարգ իրավիճակի վերացման աշխատանքի ժամանակ ծախսվող գույք (թեստ-համակարգեր, ակտորոշիչ պատրաստուկներ, լաբորատոր պլաստիկ, անհատական պաշտպանության միջոցներ, ակտահանիչ միջոցներ, վառելիքաքսուքային նյութեր եւ այլն).

տարանցման պետություն՝ Կողմի պետության տարածք, որով իրականացվում է մասնագիտացված հակահամաճարակային բրիգադի տեղաշարժը:

Հոդված 2

Կողմերից մեկի պետության տարածքում անդրսահմանային տարածման պոտենցիալ ունեցող արտակարգ իրավիճակի առաջացման կամ դրա առաջացման վտանգի ի հայտ գալու դեպքում տվյալ Կողմն արտակարգ իրավիճակի առաջացման փաստի մասին տեղեկացնում է մյուս Կողմերի իրավասու մարմիններին, ինչպես նաեւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների՝ տվյալ ոլորտում համապատասխան բազային կազմակերպությանը:

Հրատապ տեղեկատվության փոխանցման կարգը սահմանվում է Անկախ Պետությունների Համագործակցության՝ առողջապահության ոլորտում համագործակցության հարցերով խորհրդի կողմից:

Հոդված 3

Այն դեպքում, երբ Կողմերից մեկի պետությունը, որի տարածքում առաջացել է արտակարգ իրավիճակը, օգնություն տրամադրելու հարցմամբ դիմում է մյուս Կողմի պետությանը կամ Կողմերի պետություններին, արտակարգ իրավիճակի վերացման համար կարող են ներգրավվել մյուս Կողմերի պետությունների մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները:

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները ներգրավվում են այնպիսի արտակարգ իրավիճակներում՝

որոնք չեն կարող վերացվել Անկախ Պետությունների Համագործակցության մեկ

մասնակից պետության ուժերով եւ միջոցներով ու միայն այդ պետության խնդրանքով.

որոնք ունեն անդրսահմանային տարածում եւ պահանջում են արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացման համաձայնեցված գործողությունների իրականացում այն պետությունների հետ համաձայնեցմամբ, որոնց տարածքները տուժել են արտակարգ իրավիճակներից:

Հոդված 4

Կողմերը միմյանց օգնություն են ցուցաբերում իրենց հնարավորություններին համապատասխան եւ կամավորության հիմունքով:

Օգնության տրամադրման պայմանները, հայցվող օգնության տեսակները եւ ծավալները, մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների կազմակերպչական կառուցվածքը եւ անձնակազմի թիվը, ինչպես նաեւ տեխնիկական միջոցների՝ ըստ տեսակների կազմալրումը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշվում են հայցող եւ տրամադրող Կողմերի պայմանավորվածությամբ:

Կողմերից մեկի պետության մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների մասնակցությունը մեկ այլ Կողմի պետության տարածքում արտակարգ իրավիճակի վերացման գործում իրականացվում է հայցող Կողմի օրենսդրությանը, սույն համաձայնագրին համապատասխան եւ Կողմերի պետությունների միջեւ կնքվող երկկողմ միջազգային պայմանագրերի հիման վրա:

Հոդված 5

Կողմերից մեկի մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների տեղափոխումը մյուս Կողմի պետության տարածքում գտնվող արտակարգ իրավիճակի գոտի կարող է իրականացվել ավտոտրանսպորտային միջոցներով, ծովային, գետային, երկաթուղային կամ ավիացիոն տրանսպորտով:

Կողմերից մեկի պետության տարածքում արտակարգ իրավիճակի վերացման հետ կապված խնդիրների իրականացման ժամանակ մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները պարտավոր են պահպանել Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերը, այդ թվում՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների միջեւ կնքված երկկողմ համաձայնագրերը, հայցող

Կողմի ազգային օրենսդրությունը:

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադն արտակարգ իրավիճակի վերացման գործողությունների գոտում պարտավոր է կատարել հայցող Կողմի կառավարման մարմինների հրամաններն ու կարգադրությունները:

Հոդված 6

Հայցող Կողմը, իր պետության օրենսդրության շրջանակներում եւ երկկողմ միջազգային պայմանագրերին համապատասխան, իրականացնում է պետական սահմանով մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների առաջնահերթ բացթողման համար անհրաժեշտ միջոցառումները, ապահովում է հայցող Կողմի պետության տարածքով դեպի արտակարգ իրավիճակի գոտի տեղաշարժվելիս նրանց ուղեկցումը, ներառյալ պաշտպանությունը, ինչպես նաեւ տրամադրում է արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ (կամ) վերացման նպատակներով օգտագործվող սարքավորումների եւ գույքի՝ տրամադրող Կողմի պետության տարածք վերադարձի երաշխիքներ:

Հոդված 7

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամները հայցող Կողմի պետության պետական սահմանը հատում են սահմանը հատելու իրավունք տվող եւ հայցող Կողմի կողմից որպես այդպիսին ճանաչվող վավերական փաստաթղթերով՝ Կողմերի կողմից համաձայնեցված՝ միջազգային հաղորդակցության համար բաց անցակետերով: Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների ղեկավարները պետք է ունենան հայցող Կողմի՝ օգնության տրամադրման մասին խնդրանքով հրավերի պատճենը, բրիգադների անդամների ցուցակը եւ հայցող Կողմի պետության տարածքում արտակարգ իրավիճակի կանխարգելման եւ (կամ) վերացման համար մասնագիտացված հակահամաճարակային բրիգադի գործուղման մասին հրամանի պատճենը:

Հոդված 8

Կողմերի պետությունների պետական (մաքսային) սահմաններով հանդերձանքի եւ ծախսանյութերի տեղափոխումը, այդ թվում՝ Կողմերի պետությունների տարածքով տարանցիկ տեղափոխումն իրականացվում են հայցող Կողմի (տարանցման

պետության) կողմից համաձայնեցված անցակետերով առաջնահերթության (գերակայության) կարգով՝ մաքսային ձեւակերպում (մաքսային գործառնություններ կատարող) եւ մաքսային հսկողություն իրականացնող մաքսային մարմին հանդերձանքի եւ ծախսանյութերի՝ տրամադրող Կողմի պետության իրավասու մարմնի կողմից վավերացված ցանկը ներկայացնելով, այն հաստատմամբ, որ նշված հանդերձանքն ու ծախսանյութերը տեղափոխվում են արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ (կամ) վերացման ու մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների կենսագործունեության ապահովման նպատակով:

Կողմերի պետությունների պետական (մաքսային) սահմաններով տեղափոխվող, այդ թվում՝ Կողմերի պետությունների տարածքներով տարանցիկ տեղափոխվող հանդերձանքը եւ ծախսանյութերն ազատվում են մաքսատուրքերի, մաքսային վճարների եւ հարկերի վճարումից՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը եւ այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

Հայցող Կողմի պետության (տարանցման պետության) մաքսային մարմինները հայցող Կողմի պետության (տարանցման պետության) մաքսային սահմաններով ներմուծվող (արտահանվող) հանդերձանքի եւ ծախսանյութերի նկատմամբ առաջնահերթության կարգով իրականացնում են մաքսային ձեւակերպում (կատարում են մաքսային գործառնություններ) եւ մաքսային հսկողություն՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը եւ այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակիցներն են Կողմերի պետությունները:

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամները կարող են ներմուծել եւ տարանցման պետությունների տարածքներով տարանցիկ տեղափոխել անձնական օգտագործման ապրանքներ՝ Կողմերի պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 9

Կողմերը, իրենց օրենսդրությանը համապատասխան, նպաստում են արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ վերացման նպատակով հայցող Կողմի պետության տարածք ուղեւորվող՝ տրամադրող Կողմի մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների, հանդերձանքի եւ ծախսանյութերի՝ իրենց տարածքներով անարգել տարանցմանը:

Հոդված 10

Արտակարգ իրավիճակի վերացման գործողությունների իրականացման գոտում մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների ընդհանուր ղեկավարումն իրականացվում է այն Կողմի պետության կողմից նշանակված իրավասու մարմնի կողմից, որի տարածքում առաջացել է արտակարգ իրավիճակը:

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների կիրառումը, ոչ ըստ ուղղակի նշանակության, չի թույլատրվում:

Հոդված 11

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադները փոխգործակցում են արտակարգ իրավիճակի վերացման հարցերով կառավարման մարմնի հետ, արտակարգ իրավիճակի գոտում հակահամաճարակային եւ կանխարգելիչ միջոցառումների անցկացման, շտաբների նիստերին մասնակցության եւ օպերատիվ տեղեկատվության փոխանակման, ծախսանյութերի եւ սննդամթերքի պաշարների համալրման հարցում աջակցության ցուցաբերման, դրանց տեղաբաշխման վայրի պահպանության ապահովման հետ կապված հարցերով իրավասու մարմնի հետ:

Հոդված 12

Մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամների աշխատանքի վարձատրության, բրիգադների անձնակազմի եւ գույքի ապահովագրության հատուցման ծախսերը, ինչպես նաեւ մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների՝ դեպի արտակարգ իրավիճակի գոտի եւ հակառակ ուղղությամբ փոխադրման ծախսերը կրում է տրամադրող Կողմը:

Հայցող Կողմը կրում է մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների անդամներին բժշկական օգնություն տրամադրելու ծախսերը, այդ թվում՝ նրանց հիվանդության, վնասվածքի կամ մահվան հետ կապված տրանսպորտային ծախսերը՝ արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ (կամ) վերացման հարցերով օգնություն ցուցաբերելու նպատակով ուղեւորվելու կամ վերադառնալու ճանապարհին առաջադրանքներ կատարելիս:

Հոդված 13

Արտակարգ իրավիճակի գոտում աշխատելիս մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների ապահովման եւ ծախսանյութերի ու սննդամթերքի պաշարների համալրման, տեղաբաշխման վայրի պահպանության հարցերը լուծվում են հայցող եւ տրամադրող Կողմերի պետությունների միջեւ միջազգային պայմանագրերի հիման վրա, ինչպես նաեւ դրանց օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 14

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների գործունեության ժամանակ նրանց աշխատանքի հիմնական ուղղություններն են՝

կլինիկական նյութի մեջ եւ շրջակա միջավայրի օբյեկտներում վարակիչ հիվանդությունների հարուցիչների հայտնաբերումը (ցուցանշումը եւ նույնականացումը), շրջակա միջավայրի, սննդամթերքի եւ սննդային հումքի սանիտարամանրէաբանական հսկողությունը.

մասնակցությունը վտանգավոր վարակիչ հիվանդությունների համաճարակային օջախների տեղափակմանն ու վերացմանն ուղղված հակահամաճարակային միջոցառումների անցկացմանը.

խորհրդատվական-մեթոդական եւ գործնական օգնության տրամադրումը սանիտարահամաճարակաբանական պրոֆիլի տարածքային մարմիններին եւ հաստատություններին, հայցող Կողմի պետության բժշկական կազմակերպություններին:

Հոդված 15

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների՝ համաճարակաբանական աշխատանքի տեխնոլոգիային, լրբորատոր ախտորոշմանը, հակահամաճարակային միջոցառումների անցկացմանը վերաբերող գործունեությունն իրականացվում է հայցող եւ տրամադրող Կողմերի պետությունների միջեւ միջազգային պայմանագրերի հիման վրա, ինչպես նաեւ նրանց օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 16

Բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման, արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ (կամ) վերացման բնագավառում կանոնավոր համագործակցության զարգացման նպատակով Կողմերը՝

փոխանակում են նորմատիվ իրավական եւ այլ փաստաթղթեր, որոնցով կանոնակարգվում է արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման մասով միջոցառումների անցկացումը.

իրականացնում են մասնագիտացված հակահամաճարակային բրիգադների մասնագետների համատեղ պատրաստման, վարժանքների անցկացման հարցերով համագործակցություն.

փոխանակում են արտակարգ իրավիճակների պայմաններում բնակչության սանիտարահամաճարակաբանական բարեկեցության ապահովման բնագավառում գիտահետազոտական աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Հոդված 17

Կողմերի համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել դրա անբաժանելի մաս կազմող փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

Հոդված 18

Սույն համաձայնագրի կիրառման եւ (կամ) մեկնաբանման ժամանակ Կողմերի միջեւ ծագող վիճելի հարցերը եւ տարաձայնությունները կարգավորվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Հոդված 19

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 20

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով:

Միացող պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից 30 օրը լրանալուց հետո:

Հոդված 21

Սույն համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է դուրս գալ սույն համաձայնագրից՝ ոչ ուշ, քան դուրս գալուց վեց ամիս առաջ իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին եւ կարգավորելով սույն համաձայնագրի գործողության ընթացքում ծագած պարտավորությունները:

Կատարված է Աստանա քաղաքում 2022 թվականի հոկտեմբերի 28-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն] (վերապահումով)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն] (հափուկ կարծիքով)

**Ռուսաստանի Դաշնության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

**Տաջիկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

**Բելառուսի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

**Ղազախստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

**Ղրղզստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

**Մոլդովայի Հանրապետության
կառավարության կողմից՝**

**Թուրքմենստանի կառավարության
կողմից՝**

**Ուզբեկստանի Հանրապետության
կառավարության կողմից՝**

[ստորագրություն]

Ուկրաինայի կառավարության կողմից՝

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

«Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2022 թվականի հոկտեմբերի 28-ի համաձայնագրի մասով

Ադրբեջանի Հանրապետությունն իրեն չի համարում կաշկանդված «Արտակարգ իրավիճակների կանխման եւ վերացման բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2015 թվականի հոկտեմբերի 16-ի համաձայնագրի դրույթներով, քանի որ դրա մասնակիցը չէ:

Սույն համաձայնագրի դրույթները Ադրբեջանի Հանրապետության կողմից չեն կիրառվելու Հայաստանի Հանրապետության նկատմամբ՝ մինչեւ հակամարտության հետեւանքների ամբողջական վերացումը եւ Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանի Հանրապետության միջեւ հարաբերությունների նորմալացումը:

Ադրբեջանի Հանրապետության
վարչապետ՝

[ստորագրություն]

Ալի Ասադով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

«Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի վերաբերյալ

Ադրբեջանի Հանրապետության կողմից «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման եւ արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի վերաբերյալ հատուկ կարծիք ներկայացնելու կապակցությամբ՝ հայկական կողմը անհրաժեշտ է համարում նշել հետեւյալը.

Սույն փաստաթղթի դրույթները Հայաստանի Հանրապետության կողմից Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ կիրառվելու են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի Հանրապետության առաջնորդների 2020 թվականի նոյեմբերի 9-ի, 2021 թվականի հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարությունների շրջանակներում ամրագրված բոլոր պայմանավորվածությունների իրականացման, ինչպես նաեւ Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության օկուպացված տարածքների ամբողջական ազատման, ագրեսիայի հետեւանքների վերացման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական-դիվանագիտական կարգավորման արդյունքներով՝ միջազգային իրավունքի նորմերին եւ սկզբունքներին համապատասխան՝ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ ամրագրված նպատակների իրագործման շահերից ելնելով:

Հայաստանի Հանրապետության
փոխվարչապետ՝

[սպորազրույթուն]

Մ.Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**

СОГЛАШЕНИЕ

**о сотрудничестве государств – участников Содружества
Независимых Государств по предупреждению и реагированию
на чрезвычайные ситуации в области общественного
здравоохранения санитарно-эпидемиологического характера**

**Официально
заверенный
текст**

СОГЛАШЕНИЕ
о сотрудничестве государств – участников Содружества Независимых
Государств по предупреждению и реагированию на чрезвычайные
ситуации в области общественного здравоохранения
санитарно-эпидемиологического характера

Правительства государств – участников Содружества Независимых Государств, именуемые в дальнейшем Сторонами,

учитывая положения Соглашения о сотрудничестве государств – участников Содружества Независимых Государств в области предупреждения и ликвидации чрезвычайных ситуаций от 16 октября 2015 года,

действуя в рамках реализации на территориях государств – участников Содружества Независимых Государств Стратегии Всемирной организации здравоохранения по внедрению Международных медико-санитарных правил (2005 г.) и борьбе с инфекционными болезнями при осуществлении мероприятий по предупреждению и ликвидации чрезвычайных ситуаций в области общественного здравоохранения санитарно-эпидемиологического характера, обусловленных проявлениями опасных инфекционных болезней или массовых неинфекционных заболеваний (отравлений) или реализацией угроз совершения биотеррористических актов, а также иных событий в области общественного здравоохранения, имеющих международное значение,

руководствуясь желанием продолжить и расширить сотрудничество в области общественного здравоохранения,

признавая важность сотрудничества в предупреждении и ликвидации чрезвычайных ситуаций санитарно-эпидемиологического характера на территориях государств – участников Содружества Независимых Государств, требующих проведения мероприятий по санитарной охране территории государства – участника Содружества Независимых Государств, в том числе с помощью специализированных противоэпидемических бригад,

исходя из взаимных интересов предохранения территорий государств – участников Содружества Независимых Государств от возникновения и возможных последствий чрезвычайных ситуаций санитарно-эпидемиологического характера, связанных с распространением чрезвычайной ситуации на территориях сопредельных государств и риском ограничений для межгосударственных перевозок и торговли в рамках Содружества Независимых Государств,

согласились о нижеследующем:

Статья 1

Для целей настоящего Соглашения используются следующие термины:
государства Сторон – государства – участники настоящего Соглашения;

чрезвычайная ситуация в области общественного здравоохранения санитарно-эпидемиологического характера (далее – чрезвычайная ситуация) – экстраординарное событие, вызванное опасными инфекционными или массовыми неинфекционными болезнями (отравлениями), требующее скоординированных на национальном и/или международном уровне ответных мер по санитарной охране территории;

специализированные противоэпидемические бригады – мобильные формирования государств Сторон постоянной готовности и экстренного реагирования, автономного функционирования, использующие современные диагностические, информационные технологии и оборудование, имеющие квалифицированный кадровый состав, способные решать задачи по предупреждению и ликвидации чрезвычайных ситуаций;

запрашивающая Страна – Страна, которая обращается с запросом об оказании ей помощи в предупреждении и/или ликвидации чрезвычайных ситуаций;

предоставляющая Страна – Страна, оказывающая помощь по запросу запрашивающей Страны;

компетентный орган – орган государства Страны, ответственный в соответствии с национальным законодательством за проведение противоэпидемических и профилактических мероприятий в зоне чрезвычайной ситуации и реализацию настоящего Соглашения;

оснащение – имущество, предназначенное для предупреждения и ликвидации чрезвычайной ситуации, материалы, технические и транспортные средства, лабораторное оборудование специализированной противоэпидемической бригады, личное имущество членов бригады, средства связи, медикаменты и другое необходимое имущество;

расходные материалы – имущество, расходуемое в работе по ликвидации чрезвычайной ситуации (тест-системы, диагностические препараты, лабораторный пластик, средства индивидуальной защиты, дезинфекционные средства, горюче-смазочные материалы и пр.);

государство транзита – территория государства Страны, через которую происходит перемещение специализированной противоэпидемической бригады.

Статья 2

В случае возникновения на территории государства одной из Сторон чрезвычайной ситуации с потенциалом трансграничного распространения или появления угрозы ее возникновения данная Страна информирует о факте возникновения чрезвычайной ситуации компетентные органы других Сторон, а также соответствующую базовую организацию государств – участников Содружества Независимых Государств в данной области.

Порядок передачи экстренной информации определяется Советом по сотрудничеству в области здравоохранения Содружества Независимых Государств.

Статья 3

В случае обращения государства одной из Сторон, на территории которого возникла чрезвычайная ситуация, с запросом о предоставлении помощи к государству другой Стороны или государствам Сторон для ликвидации чрезвычайной ситуации могут привлекаться специализированные противоэпидемические бригады государств других Сторон.

Специализированные противоэпидемические бригады применяются в чрезвычайных ситуациях:

которые не могут быть ликвидированы силами и средствами одного государства – участника Содружества Независимых Государств, и только по просьбе этого государства;

имеющих трансграничное распространение и требующих осуществления согласованных действий по ликвидации последствий чрезвычайных ситуаций, по согласованию с государствами, территории которых затронуты чрезвычайными ситуациями.

Статья 4

Стороны оказывают друг другу помощь в соответствии со своими возможностями и на основе добровольности.

Условия предоставления помощи, виды и объемы запрашиваемой помощи, организационная структура и количество личного состава специализированных противоэпидемических бригад, а также укомплектование по видам технических средств определяются в каждом конкретном случае по договоренности запрашивающей и предоставляющей Сторон.

Участие специализированных противоэпидемических бригад государства одной из Сторон в ликвидации чрезвычайной ситуации на территории государства другой Стороны осуществляется в соответствии с законодательством запрашивающей Стороны, настоящим Соглашением и на основании заключаемых двусторонних международных договоров между государствами Сторон.

Статья 5

Перемещение специализированных противоэпидемических бригад одной из Сторон в зону чрезвычайной ситуации на территории государства другой Стороны может осуществляться на автотранспортных средствах, морским, речным, железнодорожным или авиационным транспортом.

При выполнении задач по ликвидации чрезвычайной ситуации на территории государства одной из Сторон специализированные

противоэпидемические бригады обязаны соблюдать международные договоры, заключенные в рамках Содружества Независимых Государств, в том числе двусторонние соглашения, заключенные между государствами – участниками Содружества Независимых Государств, национальное законодательство запрашивающей Стороны.

Специализированная противоэпидемическая бригада обязана выполнять приказы и распоряжения органов управления запрашивающей Стороны в районе действий по ликвидации чрезвычайной ситуации.

Статья 6

Запрашивающая Сторона в рамках законодательства своего государства и в соответствии с двусторонними международными договорами осуществляет необходимые меры по приоритетному пропуску специализированных противоэпидемических бригад через государственную границу, обеспечивает их сопровождение, включая охрану, при передвижении к зоне чрезвычайной ситуации по территории государства запрашивающей Стороны, а также предоставляет гарантии возвращения на территорию государства предоставляющей Стороны оборудования и имущества, используемых в целях предупреждения и/или ликвидации чрезвычайных ситуаций.

Статья 7

Члены специализированных противоэпидемических бригад пересекают государственную границу государства запрашивающей Стороны по действительным документам, дающим право на пересечение границы и признаваемым запрашивающей Стороной в этом качестве, через согласованные Сторонами пункты пропуска, открытые для международного сообщения. Руководители специализированных противоэпидемических бригад должны иметь копию приглашения запрашивающей Стороны с просьбой о предоставлении помощи, список членов бригад и копию приказа о командировании специализированной противоэпидемической бригады для предупреждения и/или ликвидации чрезвычайной ситуации на территории государства запрашивающей Стороны.

Статья 8

Перемещение оснащения и расходных материалов через государственные (таможенные) границы государств Сторон, в том числе перемещение транзитом через территории государств Сторон, осуществляется в первоочередном (приоритетном) порядке в пунктах пропуска, согласованных запрашивающей Стороной/государством транзита, при представлении в таможенный орган, осуществляющий таможенное оформление (совершающий таможенные операции) и таможенный контроль, перечня оснащения и расходных материалов, заверенного компетентным органом государства

предоставляющей Стороны, с подтверждением, что указанные оснащение и расходные материалы перемещаются в целях предупреждения и/или ликвидации чрезвычайных ситуаций и обеспечения жизнедеятельности специализированных противоэпидемических бригад.

Оснащение и расходные материалы, перемещаемые через государственные (таможенные) границы государств Сторон, в том числе перемещаемые транзитом через территории государств Сторон, освобождаются от уплаты таможенных пошлин, таможенных сборов и налогов в соответствии с законодательством государств Сторон и международными договорами, участниками которых являются государства Сторон.

Таможенные органы государства запрашивающей Стороны/государства транзита осуществляют таможенное оформление (совершают таможенные операции) и таможенный контроль в отношении оснащения и расходных материалов, ввозимых (вывозимых) через таможенные границы государства запрашивающей Стороны/государства транзита, в первоочередном порядке в соответствии с законодательством государств Сторон и международными договорами, участниками которых являются государства Сторон.

Члены специализированных противоэпидемических бригад могут ввозить и перемещать транзитом через территории государств транзита товары для личного пользования в соответствии с законодательством государств Сторон.

Статья 9

Стороны в соответствии со своим законодательством способствуют беспрепятственному транзиту через свои территории специализированных противоэпидемических бригад, оснащения и расходных материалов предоставляющей Стороны, следующих для предупреждения и ликвидации чрезвычайных ситуаций на территорию государства запрашивающей Стороны.

Статья 10

Общее руководство специализированными противоэпидемическими бригадами в районе действий по ликвидации чрезвычайной ситуации осуществляется компетентным органом, назначенным государством Стороны, на территории которого возникла чрезвычайная ситуация.

Применение специализированных противоэпидемических бригад не по прямому назначению не допускается.

Статья 11

Специализированные противоэпидемические бригады взаимодействуют с органом управления по ликвидации чрезвычайной ситуации, компетентным органом по вопросам проведения противоэпидемических и профилактических мероприятий в зоне чрезвычайной ситуации, участия в заседаниях штабов и

обмена оперативной информацией, оказания содействия в пополнении запасов расходных материалов и продуктов питания, обеспечения охраны места их дислокации.

Статья 12

Расходы на оплату труда членов специализированных противоэпидемических бригад, оплату страховки личного состава и имущества бригад, а также расходы на транспортировку специализированных противоэпидемических бригад в зону чрезвычайной ситуации и обратно несет предоставляющая Сторона.

Запрашивающая Сторона несет расходы по оказанию медицинской помощи, в том числе транспортные расходы, связанные с заболеванием, ранением или смертью членов специализированных противоэпидемических бригад при выполнении по пути следования или возвращения задач по оказанию помощи при предупреждении и/или ликвидации чрезвычайных ситуаций.

Статья 13

Вопросы обеспечения специализированных противоэпидемических бригад при работе в зоне чрезвычайной ситуации и пополнения запасов расходных материалов и продуктов питания, охраны места дислокации решаются на основании международных договоров между государствами запрашивающей и предоставляющей Сторон, а также в соответствии с их законодательством.

Статья 14

Основными направлениями работы специализированных противоэпидемических бригад при их задействовании на территориях государств – участников Содружества Независимых Государств являются:

выявление возбудителей инфекционных болезней (индикация и идентификация) в клиническом материале и объектах окружающей среды, санитарно-микробиологический контроль окружающей среды, продуктов питания и пищевого сырья;

участие в проведении противоэпидемических мероприятий по локализации и ликвидации эпидемических очагов опасных инфекционных болезней;

оказание консультативно-методической и практической помощи территориальным органам и учреждениям санитарно-эпидемиологического профиля, медицинским организациям государства запрашивающей Стороны.

Статья 15

Функционирование специализированных противоэпидемических бригад на территориях государств – участников Содружества Независимых Государств в части, касающейся технологии эпидемиологической работы, лабораторной диагностики, проведения противоэпидемических мероприятий, осуществляется на основании международных договоров между государствами запрашивающей и предоставляющей Сторон, а также в соответствии с их законодательством.

Статья 16

В целях развития регулярного сотрудничества в области обеспечения санитарно-эпидемиологического благополучия населения, предупреждения и/или ликвидации чрезвычайных ситуаций Стороны:

обмениваются нормативно-правовыми и другими документами, регламентирующими проведение мероприятий по обеспечению санитарно-эпидемиологического благополучия населения в условиях чрезвычайных ситуаций;

осуществляют сотрудничество по вопросам совместной подготовки специалистов специализированных противоэпидемических бригад, проведения учений;

обмениваются информацией о научно-исследовательских работах в области обеспечения санитарно-эпидемиологического благополучия населения в условиях чрезвычайных ситуаций.

Статья 17

По согласию Сторон в настоящее Соглашение могут вноситься изменения, являющиеся его неотъемлемой частью, которые оформляются соответствующим протоколом.

Статья 18

Спорные вопросы и разногласия между Сторонами, возникающие при применении и/или толковании настоящего Соглашения, решаются путем консультаций и переговоров между заинтересованными Сторонами.

Статья 19

Настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием третьего уведомления о выполнении подписавшими его Сторонами внутригосударственных процедур, необходимых для его вступления в силу.

Для Сторон, выполнивших внутригосударственные процедуры позднее, настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием соответствующих документов.

Статья 20

Настоящее Соглашение после его вступления в силу открыто для присоединения к нему любого государства – участника Содружества Независимых Государств путем передачи депозитарию документа о присоединении.

Для присоединяющегося государства настоящее Соглашение вступает в силу по истечении 30 дней с даты получения депозитарием документа о присоединении.

Статья 21


Настоящее Соглашение заключается на неопределенный срок. Каждая из Сторон вправе выйти из настоящего Соглашения, направив депозитарию письменное уведомление о таком своем намерении не позднее чем за шесть месяцев до выхода и урегулировав обязательства, возникшие за время действия настоящего Соглашения.

Совершено в городе Астане 28 октября 2022 года в одном подлинном экземпляре на русском языке. Подлинный экземпляр хранится в Исполнительном комитете Содружества Независимых Государств, который направит каждому государству, подписавшему настоящее Соглашение, его заверенную копию.


За Правительство
Азербайджанской Республики

 «Соглашение»


За Правительство
Республики Армения

 «Соглашение»


За Правительство
Республики Беларусь



За Правительство
Республики Казахстан



За Правительство
Кыргызской Республики



За Правительство
Республики Молдова

За Правительство
Российской Федерации


За Правительство
Республики Таджикистан

За Правительство
Туркменистана

За Правительство
Республики Узбекистан

За Правительство
Украины



ОГОВОРКА
АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ
к Соглашению от 28 октября 2022 года о сотрудничестве государств –
участников Содружества Независимых Государств по предупреждению и
реагированию на чрезвычайные ситуации в области общественного
здравоохранения санитарно-эпидемиологического характера

Азербайджанская Республика не считает себя связанной с положениями Соглашения о сотрудничестве государств – участников СНГ в области предупреждения и ликвидации чрезвычайных ситуаций от 16 октября 2015 года, поскольку не является его участницей.

Положения настоящего Соглашения не будут применяться Азербайджанской Республикой в отношении Республики Армения до полного устранения последствий конфликта и нормализации отношений между Республикой Армения и Азербайджанской Республикой.

Премьер-министр
Азербайджанской Республики



Али Асадов

**ОСОБОЕ МНЕНИЕ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

**к Соглашению о сотрудничестве государств – участников Содружества
Независимых Государств по предупреждению и реагированию на чрезвычайные
ситуации в области общественного здравоохранения санитарно-
эпидемиологического характера**

В связи с представлением Азербайджанской Республикой Особого мнения к Соглашению о сотрудничестве государств – участников Содружества Независимых Государств по предупреждению и реагированию на чрезвычайные ситуации в области общественного здравоохранения санитарно-эпидемиологического характера Армянская сторона считает необходимым отметить следующее.

Положения настоящего документа будут применяться Республикой Армения в отношении Азербайджанской Республики по итогам реализации всех договорённостей, закреплённых в рамках трёхсторонних заявлений лидеров Республики Армения, Российской Федерации и Азербайджанской Республики от 9 ноября 2020 года, 11 января и 26 ноября 2021 года, а также полного освобождения Азербайджанской Республикой оккупированных ею территорий Республики Армения, устранения последствий агрессии и политико-дипломатического разрешения нагорно-карабахского конфликта в соответствии с нормами и принципами международного права в интересах достижения закреплённых Уставом ООН целей.


Вице-Премьер Республики Армения



М.Г.ГРИГОРЯН

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2022 թվականի հոկտեմբերի 28-ին ստորագրված «Հանրային առողջապահության ոլորտում սանիտարահամաճարակաբանական բնույթի արտակարգ իրավիճակների կանխարգելման և արձագանքման նպատակով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող՝ ավանդապահի կողմից հաստատված օրինակի նույնական պատճենն է:

**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետ՝**



Ն. Սարգսյան
Նելլի Սարգսյան